# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արփա-Սևան ԲԲԸ-ն ՃՇՀԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Constructions-3D | MiniPrinter Pro XL | Pro XL | Constructions-3D | Շինարարական եռաչափ բետոնե տպիչ (տեսակը՝ եռառանցք շարժական, X Y Z առանցքներով բետոնե նմուշի տպման չափսերը 2500 x 1200 x 1200 մմ): Սարքի չափսերը 3450 x 1850 x 2180 մմ, Քաշը 515կգ: Հավաքածուն համալրված է 1 հատ խարնուրդի մատակարարման ճկուն խողովակ M/F DN35 չափսի 6 մ երկարությամբ, 1 հատ ճախարակի խողովակի կախովի բռնակով, 1 հատ տպագրության հարթակով, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն ծրագրային ապահովման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հասանելությամբ, CSV ֆորմատով USB-ի միջոցով տվյալների ստացման հնարավորությամբ: Տպագրության համար պատրաստի մոդելների առցանց գրադարանին հասանելիություն: Տպագրության նյութին հարմարեցվող ծրագրային հարաչափեր՝ ջրի ճնշման և ջերմաստիճանի շեմերի կարգավորմամբ: Ծրագրային ապահովումն ունի 3D վիզուալիզացիա և STL, DXF և G-CODE ֆայլերի մշակման հնարավորություն: Սարքը համալրված է ներկառուցված տվիչով՝ տպման հարթակի չափերը ճանաչելու համար և ունի հնարավորություն տարբեր տպագրական հարթակների վրա միաժամանակյա տպագրություն իրականացնելու։ Տպագրության արագություն՝ մինչև 400մմ/վ՝ գոգավոր շերտերի տպագրության հնարավորությամբ։ Շերտի հաստություն - 5 - 20 մմ, շերտի տպան լայնությունը նվազագույնը 20մմ, X, Y և Z առանցքների տպագրության հարաբերական ճշգրտություն - 0,1 մմ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Տպագրության նյութ - տարբեր կոմպոզիտային հավելանյութերով ցեմենտի պարունակությամբ պատրաստված նյութ: Հավաքածուն կներառի 6 տոննա (4 տոննա SIKA 733 և 2 տոննա TERMIX-3D նյութ), նախատեսված եռաչափ բետոնե տպագրության համար: Սնման աղբյուրը - Եռաֆազ 380 Վ, 50 Հց, էլ. էներգիայի սպառումը - 4.5 - 5.5 ԿՎտ: Տպագրության նյութի պոմպային մղման հավաքածու - եռաչափ բետոնե տպագրության համար չոր խառնուրդներ և լուծույթներ խառնելու ու մղելու համակարգ: Պոմպային նյութի ճնշման և ջերմաստիճանի, խառնված ջրի հոսքի և ջերմաստիճանի տվիչներ, 1 հատ խառնուրդի մատակարարման ճկուն խողովակ M/F DN35 չափսի,13.3 մ երկարությամբ, 2 հատ պոմպային ռոտոր և 2 հատ ստատոր, ճախարակի խողովակի կախովի բռնակ, պոմպի մաքրման հավաքածու: Կափարիչ՝ խառնուրդի պահեստավորման բունկերներին միանալու համար: Խառնուրդի պահեստային տելեսկոպիկ բունկեր՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 1.2մ3 տարողությամբ: Սարքը համալրված կլինի նաև գործարկման համար անհրաժեշտ հետևյալ հավելյալ պարագաներով - Պոմպի ռոտոր և ստատոր (առավելագույնը 16 լ/րոպե) 4 հատ, 10 հատ մաքրող գնդակ, տպիչի ծայրափողակ 4 տարբեր չափսերի, 2 հատ ստանդարտ տպագրական հարթակ, 2 հատ մեծ տպագրական հարթակ, ֆիլտրի պարկերի համար տակդիր` 10 զտիչ պարկերով, 2 հատ Ստանդարտ ճկուն խողովակ մղման համար M/F DN35 չափի, երկարությունը 13,3 մ: Շինանյութերի չափման և բնութագրման սարք, որն օգտագործվում է բնութագրելու խառնուրդների տպագրելիությունը թարմ վիճակում, ինչպես նաև դրանց կիրառելիությունը եռաչափ բետոնե տպագրության մեջ: «Ստանդարտ» ռեժիմ` փորձարկման հաշվետվություն և կոնֆիգուրացիա` մշակված արտադրողի կողմից: «Անհատական» ռեժիմներ` փորձարկման հաշվետվություն և կարգավորումներ` սահմանված |

օգտագործողի համար, 3 հատ փոխվող չափիչ զոնդեր, որոնք հարմար են մածուկների, խառնուրդների և միկրոբետոնի համար, 2 հատ նմուշառման տարա, Տվյալների արտահանում CSV ֆորմատով: Սարքի չափերն են` 300x360x510մմ, քաշը` 27կգ, սնման աղբյուրը - 220 Վ, 50 Հց: Սարքը կտեղադրվի, կկարգաբերվի, կփորձարկվի և տեղում կկազմակերպվի ուսուցում համապատասխան անձնակազմին: Երաշխիքային ժամկետ` ապրանքը ընդունելու պահից 365 օրացուցային օր: Ապրանքը կլինի նոր և չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը` բանվորական ուժով կկատարվի մեր կողմից:

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АООТ АРПА-СЕВАН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՃՇՀԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |